Funded by the European Union

Արժանապատիվ աշխատանք հիմա

Իրականացման ժամանակահատված: 01.02.2021 - 31.01.2024

ԱլԳ երկրներ:

Armenia

ԵՄ ներդրում: € 399 300

Ընդհանուր բյուջե: € 465 924

Իրականացնող կազմակերպություն(ներ):

Helsinki Citizens' Assembly - Vanadzor

Սոցիալական ցանցերում օգտահաշիվների հղումներ: facebook.com/DecentWorkNow

Նախագծի կայքէջ: arhmiutyun.am/

Նախագծի նկարագրություն:

Արժանապատիվ աշխատանք հիմա՛ ծրագրի ընդհանուր նպատակն է նպաստել աշխատանքի և սոցիալական իրավունքների պաշտպանության անհատական, կոլեկտիվ և պետական մեխանիզմների զարգացմանը և դրանց կիրառմանը Հայաստանում՝ աշխատողների, արհմիությունների հզորացման և օրենսդրական դաշտի բարեփոխումներին ուղղված շահերի պաշտպանության միջոցով:
Ծրագիրը որդեգրել է աշխատանքային իրավունքների համապարփակ մոտեցում, համաձայն որի պետության կողմից պաշտպանության մեխանիզմների և երաշխիքների արդյունավետությունը կախված է նրանից, թե որքանով են տեղեկացված անհատ քաղաքացիները և արհմիությունները իրենց իրավունքների մասին: Այս մոտեցումը հնարավորություն կտա ծրագրի շրջանակներում համագործակցող կազմակերպություններին ստեղծել և տարածել ռեսուրսներ, որոնք քաղաքացիներին կիրազեկեն իրենց անհատական և կոլեկտիվ աշխատանքային իրավունքների մասին և համապատասխան հմտություններ կտան նրանց, ովքեր կորոշեն միավորվել՝ արհմիություններ ստեղծելու և օգտագործելու միջազգային և տեղական մեխանիզմները արժանապատիվ աշխատանքի իրենց իրավունքի ապահովման համար:

Ակնկալվող արդյունքներ:

Կբարելավվեն և կկիրարկվեն քաղաքացիների աշխատանքային և սոցիալական իրավունքների պաշտպանության մեխանիզմները՝ նրանց իրազեկության բարձրացման, անհրաժեշտ իրավական աջակցության տրամադրման և խախտված իրավունքների պաշտպանության ուղղությամբ գործողությունների իրականացման միջոցով:

Ծրագրի արդյունքում կհզորացվեն աշխատանքային իրավունքների կոլեկտիվ պաշտպանության մեխանիզմները և զբաղվածության նկատմամբ իրավունքահենք մոտեցումը:

Ծրագիրը նպաստելու է աշխատանքային իրավունքների և սոցիալական պաշտպանության պետական մեխանիզմների բարեփոխմանը՝ մշտադիտարկման, օրենսդրության և քաղաքականության վերլուծության և առաջարկությունների միջոցով: